ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, Արմավիրի մարզ, Վանանդ բնակավայր *28.07.2025թ.*

Սույն թվականի հուլիսի 28-ին ժամը 12.00-ին ՀՀ Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի Վանանդ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ ՀՀ «Վանանդ Ագրո» ՓԲԸ կողմից Բաղրամյան համայնքի Վանանդ բնակավայրի 7-րդ հողամաս հասցեում նախատեսվող նուշի մշակման արտադրամասի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման վերաբերյալ հանրային քննարկումների (առաջին հանրային քննարկում) նիստը:

Ներկա էին Արմավիրի մարզպետարանի, Բաղրամյան համայնքի, Վանանդ բնակավայրի, «Վանանդ Ագրո» ՓԲ ընկերության, «Քոնսեկոարդ» ՍՊ ընկերության ներկայացուցիչները և համայնքի բնակիչները (մասնակիցների ցանկը՝ ստորագրություններով, և տեսաձայնագրությունը կցվում են արձանագրությանը):

Բացման խոսքով հանդես եկավ Վանանդ բնակավայրի վարչական ղեկավար Ռոման Մանուկյանը: Նա ողջունեց մասնակիցներին, շնորհակալություն հայտնեց ներկա գտնվելու համար և խոսքը փոխանցեց Ծրագրի ձեռնարկող ընկերությունների ներկայացուցիչներին:

«Քոնսեկոարդ» ՍՊ ընկերության ներկայացուցիչ Արման Խաչատրյանը իր ելույթում ներկայացրեց շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման օրենքով սահմանված ընթացակարգը, ինչպես նաև Ծրագրի իրագործման շրջանակներում հնարավոր բնապահպանական ռիսկերը: Մասնավորապես, նա կարևորեց այն հանգամանքը, որ ներկայացված գործունեությունը բնութագրվում է որպես ցածր ռիսկային քանի որ գտնվում է բնակավայրերից բավականին հեռու և ամայի տարածքում (հարևանությամբ չկան բնակելի շենք-շինություններ, խանութներ, բիզնեսներ և այլն): Նա նշեց, որ գործունեության իրականացումը կառաջացնի որոշակի փոքր ազդեցություններ, որոնք կլինեն կարճաժամկետ և ոչ էական:

«Վանանդ Ագրո» ՓԲ ընկերության ներկայացուցիչ Արա Համազասպյանը հավելեց շարունակեց Ա. Խաչատրյանի ելույթը, ներկայացնելով գործունեության տեխնիկական մասը:

Մարզպետարանի ներկայացուցիչ Կամո Մարգարյանը հետաքրքրվեց թե ինչ հեռավորության վրա է գտնվում նախատեսվող գործունեության տարածքը Վանանդ բնակավայրից:

Ա. Համազասպյանը նշեց, որ հեռավորությունը կազմում է մոտ 5կմ:

Ներկաները հետաքրքրվեցին թե որքան մակերես է նախատեսված նուշի արտադրամասի շինարարության համար:

Ա. Համազասյանը նշեց, որ կառուցապատման մակերեսը կազմում է մոտ 2000մ²:

Ներկաները նշեցին, որ ողջունում են ներկայացված գործունեությունը քանի որ այն կունենա հիմնականում դրական ազդեցություններ թե՛ Զեռնարկողի, և թե՛ համայնքի համար:

Քանի որ այլ հարցեր չհնչեցին Ռ. Մանուկյանը շնորհակալություն հայտնեց ներկաներին և փակեց նիստը:

Հանրային քննարկումների
պատասխանատու և վարող՝ Ռ. Մանուկյան

Զեռնարկողի ներկայացուցիչ՝ Ա. Համազասյան

ՀՀ Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի Վանանդ բնակավայրի 7-րդ հողամաս հասցեում նախատեսվող նուշի մշակման արտադրամասի կառուցման վերաբերյալ հանրային քննարկումների (առաջին քննարկում) նիստի մասնակիցների

ՑՈՒՑԱԿ

ՀՀ, Արմավիրի մարզ, Վանանդ բնակավայր

28.07.2025

Անուն Ազգանուն / Name Surname	Կազմակերպություն կամ բնակության վայրը / Organization or residence place	Կոնտակտային տվյալներ / Contacts	Ստորագրություն / Signature
[illegible]	[illegible]	[illegible] 096-105533	
[illegible]	[illegible]	077-40-004	
[illegible]	[illegible]	093-19-70-80	
[illegible]	[illegible]	093-99-01-05	
[illegible]	[illegible]	098 62 67 50	
[illegible]	[illegible]	077 85 25 95	
[illegible]	[illegible]	093-41-20-01	
[illegible]	[illegible]	055906-106	
[illegible]	[illegible]	098-34-45-33	